

Պարույր Սևակ

Մի պահ զղջում եմ

Ես օգնեցի բոլորին, ես ինձ միայն չօգնեցի,
Կորով տվի ամենքին, միայն ինքս հոգնեցի:
Խորհուրդներով իմ խելոք խելք հավաքած գնացին
Քանի՛- քանի՛սը կյանքում - ե՛ս էլի գիժ մնացի:
Ով հանդիպեց՝ ստացավ մի թաս գինի ինձանից,
Լոկ ես գինի չընպեցի իմ սեփական ինձանից:
Ի՞նչ եմ եղել ողջ կյանքում՝ հարսանքավոր ու քավոր,
Մինչ ամենքից ավելի ինձ էր օջախ հարկավոր:
Վստահեցին ոմանք ինձ - հոգիս դարձավ գաղտնարան,
Վստահեցի շատերին - գաղտնիքս առան ու տարան:
Ու զղջում եմ ես մի պահ. սեր ու բարիք եմ ցրել,
Մինչդեռ պետք էր սեր հայցել, իսկ բարիքը՝ վաճառել…

20.IV.1957թ.
Մոսկվա

Յատուկ Պոէմ